

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Այն մարդը,
որ չէր
խոնարհի



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Adapted by: Mary-Anne S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children


www.M1914.org

©2026 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Նաբուգոդոնոսոր
թագաւոր հսկայ
ոսկիէ արձան մը
կառուցեց: Գլուխէն
մինչեւ ոտքը
ոսկի էր:



Թերեւս ան մոռցաւ
երագը, որ Աստուած
դրկեց զինք ըսելու,
թէ իր ոսկիէ
թագաւորութիւնը
յաւիտեան չէ:



Թերեւս ան
կարծեց, թէ
եթէ լման ոսկիէ
արձան մը շինէր
այն ատեն
Աստուծոյ խօսքը
իր երագին մէջ
չ'իրականանար:



Թագաւորին ծառաներէն
մէկը կարդաց հրամանը
ամէն ժողովուրդին:



"... Բոլորդ պիտի
երկրպագեք գետին
ծռելով եւ պաշտեք այս
ոսկիէ արձանը...
եւ ով որ գետին
չի ծռիր եւ չի
պաշտեր, ...





... պիտի
Նետուի
զօրաւոր
եւ բոցաւոր
կրակի մէջ”:




Ամեն մարդ կատարեց ինչ որ
թագաւորը հրամայեց բացի երեք
մարդիկ:




Այս մարդիկը հրեաներ էին: Անոնք
Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագովն
էին, Դանիելի
ընկերները:



Կ'երեւայ, թէ Դանիէլը հոն չէր այդ
ժամանակ, որովհետեւ ինքն ալ
անշուշտ պիտի մերժեր



պաշտել
մարդու
ձեռքով
շինուած
արձան:



Թագաւորին խելացի մարդիկը
կը նախանձէին Դանիէլէն եւ
իր ընկերներէն, որովհետեւ
թագաւորը իրենց կը
հաւնէր: Ուրեմն
անոնք ըսին.



"Երեք մարդիկ կան, որոնց դուն
իբր կառավարիչներ ընտրեցիր
Բաբելոնի վրայ, Սեդրաք,
Միսաք եւ
Աբեդնագոս:



Այս մարդիկը օ՛հ, թագաւոր,
քեզի չեն ենթարկուիր: Բու
Աստուածներուդ չեն ծառայեր,
ոչ ալ կը պաշտեն ոսկիէ
արձանդ, որ դուն
կառուցեցիր":





Նաբուգոդոնոսոս
ր թագաւոր
չպատճառեց
այս մարդը, բայց
ինք ըսաւ, որ
ոեւէ մէկը, որ
իր հրամանին
չ'ենթարկուիր
պիտի պատժուի:



Ան աղաչեց անոնց, որպեսզի
միտքերնին փոխեն: "Եթե

չպաշտեք, պիտի
նետուիք բոցաւոր
կրակին մէջ եւ այրիք:
Եւ ո՞ր աստուածը
ձեզի պիտի
կարենայ
փրկել իմ
ձեռքէս:"



Թագաւորը շատ մեծ սխալ մը կը
գործէր: Ան ապրող Աստուծոյ դէմ
մարտահրաւեր կ'ըներ: Երեք հրեայ
մարդիկը գիտէին, թէ Աստուծոյ
օրէնքին դէմ է
արձան
պաշտել:



Անոնք իրենց կեցուածքին վրայ
մնացին, որովհետեւ անոնք կը
վստահէին Աստուծոյ, անոնք
չէին վախնար
թագաւորէն:




Այս երեք մարդիկը
պատասխան մը ունեին
թագաւորին:



Անոնք ըսին. "Մեր Աստուածը, որուն
մենք կը ծառայենք կարող է մեզ
փրկել այդ բոցավառող կրակէն:



Բայց եթե ոչ, թող որ դուն գիտնաս, ով
թագաւոր, որ մենք քու
աստուածներուդ ոչ կը ծառայենք եւ ոչ
ալ կը պաշտենք ոսկիէ արծանը, որ
դուն հիմնեցիր":



Նաբուգոդոնոսոր
թագաւոր շատ
բարկացաւ: Ան
հրամայեց, որ
փուռը եօթը
անգամ աւելի
տաքցնեն:



Տակաւին
մարդիկը
ծունկի չէին քար
եւ խոնարհիր:



Թագաւորը հրամայեց
իր բանակի
հզօր
մարդոց,



որպէսզի
Կապեն Սեդրաք, ...



... Միսաք եւ Աբեղնագոյլը
եւ անոնց
բոցաւոր
կրակին



մէջ
նետեն:



Փուռը այդքան
տաք էր, որ այն
մարդիկը, որ
նետեցին
Սեդրաք, ...



... Միսաք եւ
Աբեղնագոյ
կրակին մէջ
իրենք
այրեցան
սոսկալի
տաքէն:



Թագաւորը հեռուէն կը դիտէր: Ան տեսաւ երեք մարդիկը կը նետուին կրակին մէջ: Բայց այդ ամէն ինչ չէր, որ ան տեսաւ:



Նաբուգոդոնոսոր թագաւոր ապշեցաւ.

"Մենք այս երեք
մարդիկը կապուած
կրակին մէջ
չնետեցի՞նք",
ան
հարցուց իր
օգնական-
ներուն:




"Այո", պատասխանեցին
անոնք: Ան ըսաւ.

"Նայեցէք, ես
չորս մարդ
կը տեսնեմ,
որոնք
ազատ են,
եւ կրակին
մէջտեղը կը
գալեն, ...



... եւ անվնաս
եւ չորրորդը
կարծես
Աստուծոյ
Որդին է”:



Բոցավառ կրակին
դրան մօտենալով
թագաւորը պոռաց.



"Սեդրաք, Միսաք
եւ Աբեդնագոյ,
Ամենաբարձ
Աստուծոյ
ծառաները
դուրս
եկեք":



Ետքը Սեդրաք, Միսաք
եւ Աբեդնագոյ՝ դուրս
եկան սարսափելի
փոռռէն:



Ամեն մարդ մօտերին եկաւ եւ
քննեցին երեք հրեաները: Անոնք
տեսան, որ կրակը որեւէ մէկ
ուժ չունի զհրենք այրելու:



Անոնց մազերը չէին խանգարուած
եւ անոնց հագուստները չէին
այրաժ: Մինչեւ իսկ այրուածքի
հոտ չկար անոնց վրայ:



Երբ ան անդրադարձաւ
ինչ պատահած էր, թագաւոր
Նաբուգոդոնոսոր շատ խելացի
բան մը ըրաւ: Ան աղօթեց
ել ըսաւ.



"Օրհնեալ է Սեդրաք, Միսաք եւ
Աբեդնագոպին Աստուածը, որ իր
հրեշտակը դրկեց փրկելու համար
իր ծառաները, որոնք կը վստահին
հրեն":



Այն մարդը, որ չէր խոնարհի

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիէլ 3

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

